Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Գառնի բանավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Ֆիզիկայի (շաբաթական 8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլերով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ (Ձև 1), մեկ լուսանկար 3Χ4 չափսի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5. ինքնակենսագրություն (Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են **հոկտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. հոկտեմբերի 21-ին**՝ ժամը **15:00 -ին**, Կոտայքի մարզի Գառնի բանավանի հիմնական դպրոցում :

Տեղեկությունների համար զանգահարել՝ (091)-51–28–93 հեռախոսահամարով: